

**ՄԵՐ ԴԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

**ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ  
ԻՆՉՊԷՍ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՀԱՅ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Հայ եկեղեցւոյ մէջ ընդհանրապէս խոստովանութիւնը կը կատարուի հաւաքական: Ապաշխարութեան եւ խոստովանութեան եկողները ծուռկի կու գան: Իրենցմէ մէկը կը կարդայ «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան» զղջումի աղօթքը, որուն մէջ յիշուած են կամայ եւ ակամայ գործըւած բոլոր մեղքերը, իսկ քահանան մէջ ընդ մէջ կ'ըսէ. «Աստուած թողութիւն չնորհէ»: Զղջումի աղօթքէն վերջ, քահանան «Ողորմեսցի Ձեզ մարդասէր Աստուած» աղօթքը արտասանելով, Աստուծոյ անունով մեղքէ կ'արձակէ խոստովանողները:

Հաւաքական խոստովանութենէն գատ, անհրաժեշտ պարագաներուն ապաշխարութեան եկողներ կրնան առանձին ներկայանալ քահանային եւ խոստովանիլ իրենց մեղքերը եւ բարի խորհուրդներ ստանալ անկէ՝ մեղքի դէմ պայքարելու համար:

**ՈՐԵՒԷ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ  
ՄԿՍԵԼԷ ԱՌԱՋ**

Իմաստութիւն Հօր, Յիսուս, տո՛ր ինձ իմաստութիւն՝ զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ: Ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս: Եւ ողորմեա՛ քո արարածոցդ, եւ ինձ՝ բազմամեղիս:

**ՀԱՍՑԷ.**

**ՃՐԱԳ ԸԱՔԱԹԱԹԵՐԹ** - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,  
P.O.Box 80810 - Tel/Fax:01-258300 – facebook-ի էջ jerak ճրագ քերթ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ԵՐԵՔՇԱՐԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ  
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ  
ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ  
ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Կազմակերպութեամբ կրօնական ժողովին եւ Ազգային առաջնորդարանի «ԱՅՈ» երիտասարդական յանձնախումբին, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ, սուրբ պատարագ պիտի մատուցուի:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Նաեւ, ամէն երեքշաբթի գիշեր, ժամը 8:00-9:00, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան – Եռագոյն» սրահին մէջ, Արժ. Տ. Ղեւոնդ քհն. Լոյսածեան Աստուածաշունչի սերտողութիւն պիտի կատարէ մեր ժողովուրդի գաւակներուն համար:

Միւրեւի ընթերցող, ճՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍԷԴ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 10 ՆՈՅՏԵՄԵՐ 2019

ԹԻՒ 45

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
Ես. 24.1-13: Եփ. 5.15-33:  
**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍ 8.49-57**

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ  
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ  
8.49-57**

Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւ մի՛ յոգնեցներ վարդապետը»:

Յիսուս ասիկա լսելով ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախճար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ չձգեց, որ ռեւէ մէկը ներս մտնէ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտնուողները բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լաք. աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ»: Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ զիսէին, որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ փոքրիկ, ոտքի՛ ել»: Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց, որ ուտելիք տան աղջկան:

**ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ՄԻԱՅՆ ՀԱԻԱՏԱ՛**

Քրիստոսի այս փառաբանական խօսքը հասկնալի եւ կիրարկելի կը դառնայ այն իսկական Քրիստոնեայ անհատին, որ իր քրիստոնեական կոչումը կ'ապրի գործով եւ ոչ թէ խօսքով: Սաղմոսերգուն փորձառաքար կը վկայէ ըսելով. «Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, ես որմէ՞ պիտի վախճամ: Տէրն է կեանքիս ապաւենը, որմէ՞ պիտի դողամ» (Սղմ. 26.1): Հետեւաբար սիրելի ընթերցող, դժուարութեան մէջ ես, մի՛ մտածէր, դիմէ՛ անմիջապէս Աստուծոյ եւ վստահ գիտցի՛ր, որ Տէրը անպայման պիտի լուծէ հարցդ, եւ քեզմէ պիտի հեռացնէ թշնամին: ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ ԱՅԼ ՄԻԱՅՆ ՈՒ ՄԻԱՅՆ ՀԱԻԱՏԱ՛ ՈՒ ԱՊԱԻԻՆԻՐ ԱՍՏՈՒԾՈՅ:

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ**  
**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՄԱՄԿՆԵՐ**

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ  
24.1-14

Ահա Տէրը պիտի կործանէ եւ ւաւերէ ամբողջ աշխարհը, տակնուվրայ պիտի ընէ աշխարհը եւ պիտի ցրուէ անոր բնակիչները:

Այ կարելի պիտի չըլլայ գանազանել, որն է աշխարհականը եւ որը՝ փահանան, ով է ծառան եւ ով՝ տէրը, ով է աղախինը եւ ով՝ տիկինը, ով է գնողը եւ ով՝ ծախողը, ով է փոխ տուողը եւ ով՝ փոխ առնողը, ով է պարտատէրը եւ ով՝ պարտապանը:

Երկիրը ամբողջութեամբ պիտի կործանի, պիտի յափշտակուի եւ ւաւերուի: Ահա Տէրը ինքն այս բաները կը յայտարարէ:

Երկիր իր կործանումը կը սգայ, աշխարհ՝ իր կործանումն ու ւաւերը: Աշխարհի դեկավարները նոյնպէս կը սգան, որովհետեւ աշխարհը անօրէն մարդոց մով լեցուեցաւ, որոնք Տիրոջ Օրէնքը ոտնակոխ ըրին, անոր պատկերանները փոխեցին եւ անոր հետ կնքուած յաւիտեանական Ուխտը չյարգեցին:

Այդ իսկ պատճառով, Աստուծոյ նզովքը պիտի հարուածէ երկիրը, որովհետեւ անոր բնակիչները մեղանշեցին. մարդիկ թշուառութեան պիտի մատնուին, եւ շատ քիչ պիտի ըլլան հարուածէն ազատածները:

Գինին խմող պիտի չունենայ, այգիին՝ փաղոզ, խրախնամքը հառաչանքի պիտի փոխուի, ուրախ թմբուկները պիտի լոնեն, ամբարիշտներու սնապարծութիւնն ու հարստութիւնը վերջ պիտի գտնեն, քնարներու ձայնը պիտի դադրի:

Մարդիկ ամօթով պիտի մնան, գինին պիտի չկարենայ գիրենք ուրախացնել եւ օղին լեղի պիտի թուի խմողներուն:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՄԱՄԿՆԵՐ**  
**ԵՓԵՍՍՅԻՆԵՐՈՒՆ**

5.15-33

Հետեւաբար ձեր ապրելակերպին ուշադրութիւն ըրէ՛ք: Մի՛ ապրի՛ք անմտօրէն, այլ՝ իմաստուններու պէս: Օգտագործեցէ՛ք ժամանակը, որովհետեւ այս օրերը չար են: Ուստի անմտութիւն մի՛ ընէ՛ք: Հասկցէ՛ք, թէ ի՛նչ կ'ուզէ Տէրը ձեզմէ: Գերին մի՛ դառնա՛ք գինիին, որ անառակութեան կը տանի այլ՝ մասնաւորաբար Սուրբ Հոգիով լեցուեցէ՛ք, իրարու հետ սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով խօսեցէ՛ք, եւ ձեր սիրտերուն մէջ միշտ երգեցէ՛ք ու սաղմոս ըսէ՛ք Տիրոջ: Միշտ, ամէն բանի համար շնորհակալութիւն յայտնեցէ՛ք Հօր Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով:

Քրիստոսի հանդէպ ձեր պատկանմանքը արտայայտեցէ՛ք իրարու հնազանդելով: Կիներ, հնազանդեցէ՛ք ձեր ամուսիններուն, ինչպէս Տիրոջ պիտի հնազանդէիք, որովհետեւ ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս ինչպէս Քրիստոս գլուխն է եկեղեցիին՝ իր մարմնին, որուն փրկիչն է ինք: Հետեւաբար, ինչպէս եկեղեցին Քրիստոսի կը հնազանդի, այնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց ամուսիններուն թող հնազանդին:

**Միրելի ընթերցող հոգեւոր սնունդը անհրաժշտ է մեր հաւատքի զօրութեան համար, միասնաբար կարդանք Աստուածաշունչը ամէն օր, թող հոգեւոր գրականութիւնը անմաս դառնայ մեր ամէնօրեայ կեանքէն:**

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ**

**ԳԱՐԻԷԼ ԵՒ ՄԻՔԱՅԷԼ  
ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԵՐԸ**

Հրեշտակապետեր Գարրիէլի եւ Միֆայէլի տօնը ըստ մեր եկեղեցւոյ տօնացոյցին կը զուգադիպի Շաբաթ, 10 Նոյեմբերին: Եկէ՛ք միասնաբար ծանօթանա՛ք հրեշտակ բառի իմաստին եւ ապա հրեշտակապետերու:

Հրեշտակ բառը կը թարգմանուի պատգամաւոր կամ դեսպան: Հրեշտակները սահմանուած են սպասաւորելու հոգիներու փրկութեան այն մարդոց, որոնք պիտի ժառանգեն երկինքի արքայութիւնը:

Թէեւ Աստուծոյ առջեւ ծառայակից ենք հրեշտակներուն հետ, սակայն մեծ է տարբերութիւնը մարդոց եւ անոնց միջեւ:

Ինչպէս սուրբերուն միջեւ կան աւելի վաստակաւորներ, նոյնպէս եւ հրեշտակներու դասերուն մէջ: Անոնցմէ ոմանք ծանօթ են մեզի իրենց անունով եւ կը տօնախմբենք իրենց յիշատակը:

**ԳԱՐԻԷԼ** հրեշտակապետը, որ կը թարգմանուի Աստուծոյ մարդ՝ երկինքի բոլոր հրեշտակներէն աւելի ծանօթ է մարդկային ցեղին: Ան յամախ պատգամաւորութեամբ հանդէս կու գայ Հին թէ՛ Նոր Կտակարաններուն մէջ, որպէս գործակալ կամ դեսպան երկնաւոր Փեսային:

**ՄԻՔԱՅԷԼ** հրեշտակապետը ներկայացուած է որպէս երկնային զօրավար եւ միանգամայն, վերակացու ու պաշտպան Աստուծոյ եկեղեցիին:

Երբ Մեծն Կոստանդիանոս իր դարձէն ետք բազմաթիւ եկեղեցիներ շինել տուաւ, ասոնց շարքին հոչակաւոր եղաւ Ս. Միֆայէլ հրեշտակապետի տաճարը:

Ըստ աւանդութեան, բարեպաշտ կայսրը Սոսթենիոնի մէջ գտաւ արձան մը, որ կը ներկայացնէր արծիւի թեւերով այր մը: Երբ կայսրը հարցուց, թէ որո՞ւ արձանն էր ան, Միֆայէլ հրեշտակապետը անոր երեւցաւ եւ ըսաւ, որ հոն տաճար մը կանգնէ, որպէսզի հաւատացեալներուն համար ուխտատեղի մը ըլլայ եւ այդտեղ երկնային բարեխօսութիւն գտնեն իրենց հոգեւոր եւ մարմնաւոր կարիքներուն համար:

Յայտնաւորքները կը գրեն, թէ երբ առաջին անգամ պատարագ պիտի մատուցուէր Ս. Միֆայէլի անունով կառուցուած եկեղեցիին մէջ, ի ծնէ խուլ եւ համր պատանի մը կանխեց սարկաւազը եւ բարձրաձայն ըսաւ. «Պոստիումէ», որ կը նշանակէ գոյշ եղէ՛ք: Եւ ապա սուրբ հայրապետը ըսաւ. «Ի սրբութիւն սրբոց»:

Ներսէս Շնորհալի իր եղբօր՝ Գրիգորիս կաթողիկոսի խնդրանքով, 100 տուն ոտանաւոր գրեց՝ նուիրուած պանծալի հրեշտակներուն:

**Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:**

**Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը:**

**Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր զխտակից մարդուն հետ:**

**Առակ. 15.10-12**